ՍՈՑԻԱԼ –ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎՐԱ

ԶԱՌՈՅԱՆ Ա. Մ.

մանկավարժական գիտությունների թեկնածու, ՇՊՀ

Անվիճելի է, որ անձի զարգացումը պայմանավորված է ինչպես կենսաբանական այնպես էլ սոցիալական գործոններով: Մասնավորապես՝ սոցիալական միջավայրում երեխայի գործունեության իրականացմամբ, որի ընթացքում նա աստիճանաբար յուրացնում է սոցիալական միջավայրի նորմերը: Սոցիալ-մշակութային միջավայրը, որում զարգանում է երեխան, իր մեջ ներառում է տարբեր միկրոմիջավայրեր, մասնավորապես՝ ընտանեկան, բակային, ուսումնական, ընկերական և այլն:

Հայտնի է, որ ընտանիքը երեխային շրջապատող առաջին սոցիալական միջավայրն է, որտեղ երեխան սովորում է դաստիարակության այբուբենը: Վազգեն Առաջինը ընդգծելով լիարժեք ընտանիքի գերակա նշանակությունը երեխայի կյանքում, նշում է. «Հրաշալիքը ծնունդի և սրբությունը մայրության. ահա հիմքը ընտանիքին: Զի ընտանիքն է խորանը այդ հրաշքին և աղբյուրը մայրական սրբության»[2, էջ 64]:

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել ընտանեկան միջավայրի ազդեցությունը երեխայի դաստիարակության գործընթացի վրա, ինչպես նաև դիտարկել այդ գործընթացում առաջացող դժվարությունների հաղթահարումը ընտանեկան խորհրդատվության միջոցով:

Ընտանիքը կարեւոր դեր է խաղում երեխայի մտավոր ունակությունների, հուզակամային և անհատական որակների ձեւավորման գործում: Սոցիալ-մանկավարժական բարձիթողի վիճակի երեխաները ավելի հաճախ հանդիպում են այնպիսի ընտանիքներում, որտեղ ծնողները տառապում են հոգեկան խնդիրներով, կան ներընտանեկան կոնֆլիկտային իրավիճակներ, անապահով պայմաններ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ ընտանեկան հարաբերությունների շեղումները, ընտանեկան դաստիարակության սխալները բացասաբար են անդրադառնում երեխայի սոմատիկ եւ մտավոր զարգացման վրա: Այսպես օրինակ Կ. Խորնիի դիտարկման համաձայն՝ ընտանիքի անդամների միջև տարաձայնությունների դեպքում, երեխան ունենում է լքվածության զգացում՝ ձգտելով աջակցության: [4, էջ27], Մինչդեռ, ըստ Բերնսի՝ այն երեխաների մոտ, ովքեր ունեն համերաշխ և կազմակերպված ընտանիքներ, զարգանում է բարձր ինքնագնահատական [3, էջ149]:

Կարևորելով ընտանիքի դերը անձի հոգևոր զարգացման գործում՝ որպես նրա արժեքային համակարգի ձևավորման հիմնադիր, նկատենք, որ այն ապահովում է նաև

ազգային ավանդույթների և մտածողության պահպանումն ու փոխանցումը սերունդներին:

Հավելենք նաև այն օրինաչափությունը, ըստ որի անչափահասների շրջանում հանդիպող ագրեսիվ պահվածքի՝ «Բուլլինգի» դրսևորման հակումները հիմնականում պայմանավորված են նրանց ընտանիքներում ձևավորված խնդրահարույց իրավիճակներով:

Ներկայումս ավելի նկատելի են դառնում ընտանեկան ճգնաժամերը, որոնցից դուրս գալու ուղիները շատ ընտանիքներ չեն գտնում: Այդ ճգնաժամերը հաղթահարելու համար ծնողները պետք է օժտված լինեն հոգեբանական և մանկավարժական բավարար գիտելիքներով, որպեսզի կարողանան ճիշտ կազմակերպել երեխայի դաստիարակությունը[2, էջ153]: Շատ դեպքերում ծնողները փորձում են երեխայի դաստիարակությունն իրականացնել ճնշման և վախի միջոցով, մինչդեռ ինչպես նշում է Վ. Ն. Սոկոլովան, «Թե ծնողները և թե մանկավարժները չպետք է ճնշեն երեխաներին՝ նրանց մեջ առաջացնելով վախ: Անհրաժեշտ է արթնացնել երեխայի միտքը, զարգացնել նրա հնարամտությունը և սովորելու ցանկությունը»[6, էջ86]:

Դիտարկելով ընտանեկան դաստիարակության թերացումները և դրանցից բխող բացասական հետևանքները ներկայացնենք դրանց հաղթահարմանը ուղղված՝ ընտանեկան խորհրդատվության գործընթացի վերաբերյալ համառոտ ակնարկ:

Մանկավարժական խորհրդատվության պրակտիկայի առաջին ոլորտներից մեկը ընտանիքի մանկավարժական խորհրդատվությունն է: Մանկավարժական խորհրդատվության վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ կան տարբեր ձևակերպումներ, որոնցից մեկի համաձայն՝ խորհրդատվությունը դա խորհրդատու-խորհրդառու որակավորված հարաբերությունն է, որի նպատակն է օգնել խորհրդառուին հասկանալու իրականության անցուդարձը և գիտակցաբար հասնել դրված նպատակին՝ պրոբլեմի լուծման միջոցով[9, էջ11]: Ծանոթանալով ընտանիքին տրվող մանկավարժական աջակցության վերաբերյալ տեսությանը՝ նշենք, որ կան ընտանեկան խորհրդատվության տարբեր մոդելներ, այդ թվում՝ «լուսավորող», «հոգեդինամիկ», «կառուցվածքային», «տրանսակցիոն» և այլն: Խորհրդատվության ցանկացած մոդելի կիրառման դեպքում էլ խորհրդատուն պետք է խորհրդատվություն անցկացնի երեխայի և ծնողի հետ միաժամանակ, իր աշխատանքում համատեղելով զգայական ու գիտակցական կողմերը: Ընտանեկան խորհրդատվության փուլերն են՝ 1. Դիագնոստիկականը, վերականգնողականը: Ըստ Ս. Մինուխինի՝ դիտարկման կառուցվածքային իմաստով ընտանեկան խորհրդատվությունը ոչ թե հատուկ ցուցումներով մեթոդների խումբ է, այլ մտածողության ուղի, որի հիմքում ընկած է այն գաղափարը, համաձայն որի ընտանեկան խնդիրները կարող են ընկալելի լինել միայն համատեքստային ուսումնասիրության դեպքում[10, էջ8]:

Հաշվի առնելով այն, որ դաստիարակչական աշխատանքների պատասխանատվության հիմնական մասը դպրոցում վերապահված է դասղեկներին, ընտանեկան դաստիարակության ուղղորդման համար, անհրաժեշտ է, որ դասղեկները ծանոթ լինեն ընտանեկան խորհրդատվության տեսության առանձնահատկություններին: Այդ նպատակով նախատեսում ենք, որ դասղեկներն անցնեն որոշակի ուսուցողական դասընթացներ, ծանոթանան ընտանեկան խորհրդատվության իրականացման ձևերին, մեթոդներին և մոդելներին: Ենթադրվում է, որ արդյունքում այդ տեսությունը կդառնա այն մեթոդական ուղեցույցը, որի օգնությամբ կհաղթահարվեն ոչ միայն դասղեկական աշխատանքներում առաջացող տարաբնույթ դժվարությունները, այլև կլուծվեն ընտանեկան դաստիարակության ընթացքում ծագող խնդիրները:

Ըստ Պեստալոցու. «Դաստիարակության այբուբենը զարգանում է գիտակցված ընտանեկան հարաբերություններում, իսկ դպրոցական դաստիարակությունը կարող է լինել արդյունավետ միայն այն դեպքում, եթե այն գործի ընտանեկան դաստիարակության հետ փոխհամաձայնեցված»[7, էջ161]: Հաշվի առնելով վերոհիշյալը՝ դասղեկներն իրենց աշխատանքները պետք է կազմակերպեն՝ համագործակցելով ծնողների հետ: Ծնողների հետ տարվող համագործակցային աշխատանքի ընթացքում պետք է քննարկել ծնող-երեխա հաղորդակցության տեսակները, ծնողներից յուրաքանչյուրի դերը դաստիարակության գործընթացում, գնահատել ընտանեկան դաստիարակության տեսակները, գտնել երեխայի զարգացման առանձնահատկությունների և ճիշտ դաստիարակության միջև պատճառահետևանքային կապերը, ընտանեկան դաստիարակության ձևը համապատասխանեցնելով երեխայի մտավոր և անձնային զարգացման առանձնահատկություններին:

Նախքան ընտանեկան խորհրդատվության անցկացումը՝ խորհրդատու-դասղեկը նախ պիտի ուսումնասիրի ընտանիքը, ծանոթանա նրա ներքին միջավայրի բաղադրիչներին՝ ընտանիքի անդամների դերերին, ընտանիքի կանոններին, արժեքներին, նպատակներին և այլն:

Ընտանեկան խորհրդատվություն իրականացնելիս խորհրդատու-դասղեկը ծնողներին ծանոթացնում է ընտանեկան դաստիարակության առանձնահատկություններին, երեխայի վրա մանկավարժական ազդեցության մեխանիզմներին ու արդյունավետ մեթոդներին: Երեխայի անհատական և տարիքային զարգացման դժվար ճգնաժամային իրավիճակներում առաջացող խնդիրների հետ կապված՝ ծնողները խորհրդատու-դասղեկից կարող են ստանալ նաև բանավոր ու գրավոր հրահանգներ՝ ուղղված՝ երեխայի պահվածքի մեջ դրական փոփոխությունների առաջացմանը:

Ընտանեկան դաստիարակության իրականացման կարևոր նախապայման է ներընտանեկան հաղորդակցության ճիշտ կազմակերպումը, որի հիմքը ծնողների և երեխաների միջև արդյունավետ հաղորդակցության ու փոխազդեցության իրականացումն է: Ծնողի հետ երեխայի փոխազդեցությունը շրջապատող աշխարհի հետ փոխազդեցության առաջին փորձն է, որի արդյունքում ձևավորում են այլ մարդկանց հետ շփվելու ոոշակի մոդելներ: Ըստ այդմ նշենք, որ Խ. Ջայնոտտն առանձնացնում է ծնող-երեխա հաղորդակցության հիմնական սկզբունքները. ա) բոլոր իրավիճակներում ծնողները պետք է պաշտպանեն երեխայի դրական ԵՍ կերպարը, բ) պետք է խոսել երեխայի արարքի մասին՝ խուսափելով անձնական բացասական որակումներից, գ) երեխայի հետ համագործակցության ձևավորման նախաձեռնողը [6, էջ122]:

Ընտանեկան միջավայրի սոցիալ-հոգեբանական վիճակը բնութագրող կարևոր ցուցանիշ է նաև համախմբվածությունը, որը պայմանավորում է ընտանիքում առկա միջանձնային փոխհարաբերությունների կայունությունը: Համախմբվածության համար որպես չափորոշիչներ հանդես են գալիս ընտանիքում գործող ընդհանուր նպատակները, արժեքները, հայացքները: Ելնելով վերոնշյալից, խորհրդատուի հիմնական խնդիրն է լինելու՝ ապահովել ընտանիքներում համախմբվածության կայացումը, ծնող-երեխա սուբսիստեմի ճիշտ և արդյունավետ ձևավորումը:

Ընտանեկան խորհրդատվություն իրականացնելիս մանկավարժ-խորհրդատուի կատարած գործողությունները պիտի ապահովեն՝ ա) ծնողների մանկավարժական մշակույթի բարձրացումը, բ) ընտանիքի կազմակերպումը որպես կոլեկտիվ, ընդհանուր հեռանկարների իրականացման ուղենիշը, գ) բանավոր պահանջների ամրապնդումը դաստիարակչական գործընթացի պայմաններում, դ) երեխաների նախասիրությունների նկատմամբ հետաքրքրության ձևավորումը:

Ամփոփելով, նշենք, որ կարևորելով ընտանեկան դաստիարակության նշանակությունը հատկապես ներառական կրթության իրականացման պայմաններում՝ պետք է նպաստել դրա արդյունավետ ու նպատակաուղղված իրականացմանը:

Ինչպես նշում է Ս. Գևորգյանը, «Անհատը որքան հարուստ է հոգեպես, այնքան զորեղ են նրա հոգեպաշտպանական մեխանիզմները, ինքնակառավարման և ինքնատիրապետման կայունությունը»[1, էջ 155]

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գևորգյան Ս.,Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր.,«Զանգակ»-97, 2002թ-208էջ:

2. Զաղոյան Ա. Մ., Երեխայի և ընտանիքի մանկավարժական խորհրդատվությունը՝ որպես դպրոցի զարգացման պայման: Հանր. գիտ. նստ. նյութեր նվ. ԳՊՄԻ հիմն. 75-ամ: ԳՊՄԻ, 9-10 հոկտ., Գյումրի Դպիր, 2009թ:-էջ152-159

3. Վազգեն Ա., Հայրապետ Հայոց. Գիրք չորրորդ, կոնդակներ, քարոզներ, ելույթներ «Մայրերի օրվա» առթիվ տպված ԱՄՆ-ումանգլերեն թարգմանությամբ հանդեսի, 1980թ., «Leaders» Հոկտեմբեր-նոյեմբեր-դեկտեմբեր միացյալ համարներում, ք. Վաշինգտոն:

4. Бернс Р. Я-концепция и Я-образы /Самосознание и защитные механизмы личности. Самара: Изд. “Бахрах”2003г.-656ст.

5. Хорни К. Наши внутренние конфликты Серия: Психологические технологии, Изд. “Академический проект”, 2007г.,-224ст.

6. Певзнер М.Н., Зайченко О.М., Горычева С.Н., Аверкин В.Н., Ширин А.Г., Петров А.В. Педагогическое консультирование /Под ред. В.А.Сластенина и И.А. Колесниковой, Учебное пособие М.: Изд. “Академия”, 2006г.-319ст.

7. Песталоцци И. Г., Избр.Пед.соч.: В 3т.Т.3, М., 1965г.

8. Соколова В.Н., Юзефович Г.Я. Отцы и дети в меняющемся мире, кн. для учителей и родителей, М.: Изд.“Просвещение” ,1991г. -223 ст.,

9. Burks H. M., Stefflre B. Theories of Counseling. 3-rd Ed. NY. McGraw-Hill, 1979 312p.

10. Minuchin S. Families and family therapy. Cambridge MA, 1974-268 p.

THE INFLUENCE OF THE FAMILY ON THE SOCIAL-CULTURAL PRIMARY ENVIRONMENT ON CHILDREN'S EDUCATION

The article discusses the role of the family in the process of raising a child, as the family is the first social environment around the child, where he learns the alphabet of upbringing.

It is well-founded that the proper organization of family communication is a precondition for the implementation of family upbringing, the basis of which is the implementation of effective communication and interaction between parents and children.

***Keywords**: family upbringing, social environment, child, communication, parent-child interaction, family counseling.*